## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1934 Յունուար թիւ 1


էջ

Խմբ. — Շնորհաւո՛ր Նոր Տարի . . 1

**Խմբագրական**

Խմբ. — Հայ մամուլի պաշտօնը . . 2

**Հայկական Ճեմարան**

Սարգսեան Հ. Գր. (հրտ.) — Երանելւոյն Պրոկղի եպիսկոպոսապետին Կոստանդնուպոլսի՝ յԱստուածայայտնութիւնն (Ճառ) . 5

Գ. Արք. Արսլանեան. — Պատառիկներ լուսածիր չաքաթացեալ վանքերէն . . 12

— Տաղ Ծննդեան Տեառն . . . 16

Ֆէթվաճեան Ա. — *British Museum*ի մէջ գտնուող հին յունական գործ պղնձաձոյլ մէկ արձանագլխի և ձեռքի մասին՝ որ «կ'ըսուի թէ» գտնուած է Հայաստանում. 17

Գ. Հենասէր. — Կորսուելու ենթակայ վաւերաթուղթեր, պաշտօնական նամակներ և հետաքրքրական գրութիւններ . . 31

**Հնախօսական**

Ս. Սիլուիա կամ Եթերիա. — Ուխտագնացութիւն ի Ս. տեղիս. (Թրգ. Հ. Ե. Փ.) 8

**Գրական**

Սօֆեան Վ. — Կոտտանք (քերթուած) . 37

Վաղինակ Ս. Բիւրատ. — Բանաստեղծին սուգը (քերթուած) . . . . 37

**Գրախօսական**

Երեմեան Հ. Ս. — «Փառանձեմ» (Օ. Սաֆրօթի). - Նատիր. - Զարդարեան Վահան. - Մ. Մամուրեան. - Քէչեան Տիգրան. - Տիկ. Իսկուհի Մինասեան. - Եաքուպեան Յ. Ատուր. - Գափամաճեան Սիմոն . 38

**Թատրոն**

Երեմեան Արամ. — Ռուսահայ թատրոնի պատմութիւնը . . . . . 21

Փէչիկեան Հ. Եղիա. — Հայկական թատրոնի ծագումը . . . . . 42

**Ազգային Քրոնիկ**

Խմբ. — Հրաշք մը Ս. Գր. Լուսաւորչի մատուռներուն մօտ. - Ընտրութիւններ. - Սուգեր . . . . . . 47


## SOMMAIRE

1934 Janvier numéro 1


p.

*Réd.* — Bonne Année ! . . . 1

» Le rôle de la Presse arménienne 2

**Académie Arménienne**

*Sarkissian P. G.* — S. Procle Patriarche. - In Epiphaniam (homelia) . . 5

*Mgr. K. Arslanian.* — Mémoires des couvents arméniens. . . . . 12

— Ode pour le Noël (poésie) . . 16

*Fetradjian A.* – Autour des fragments d'une statue de bronze du British Museum, «qu'on dit» trouvée en Arménie. 17

*K. Henassère.* — Mémoires et documents littéraires . . . . . 31

**Archéologie chrétienne**

*S. Silvia ou Aeteria* — Peregrinatio ad loca sancta (trad. par. P. P. E.) . 8

**Littérature**

*Sofian V.* — Remords (poésie) . . 37

*Vaghinak S. Burat.* — Le deuil du poète (poésie) . . . . . . 37

**Recensions**

*Erémian P. S.* — «Parantsème» (par O. Safroth). — Nadir. — Zartarian Vahan. — Mamourian M. — Kéchian Dicran. — Madame Iskouhi Minassian. — Yacoubian J. Atour. — Kapamadjian Simon . . . . . . . 38

**Théâtre**

*Erémian Aram.* — Histoire du théâtre des Arméniens en Russie . . 21

*Paitchikian P. E.* — L'origine du théâtre arménien . . . . . 42

**Chronique Arménienne**

*Réd.* — Un miracle dans le Couvent de St. Grégoire Illuminateur — Eléctions — Nécrologie . . . . . . 47



ՅՈՒՆՈՒԱՐ ԹԻՒ 1

# ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843-1934

ՀԱՏ. ՂԲ ՌՅՁԳ-ՌՅՁԴ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ


## ՇՆՈՐՀԱՒՈ՛Ր ՆՈՐ ՏԱՐԻ

Եւ ԱՅՆՔԱՆ սրտագին է մեր մաղթանքը բոլոր մեր ազնիւ ընթերցողներուն, բոլոր մեր հեռաւոր սիրելի եղբայրներուն՝ որքան դառն ու կսկծագին է այսօր անոնց վիշտը և ոգետանջ անոնց անդոհը՝ ահաւոր և սրբապիղծ եղեռնի վաղորդայնին։

Երբ ամբողջ տիեզերքի մէջ հնչելու վրայ էր կեանքի և փրկութեան մեծ պատգամը, հազար իննհարիւր երեսուն և երեք անգամ կրկնուած յուզումով, սիրով ու բերկրանքով, երբ աւետիսը պիտի ընթանար Խաղաղութեան և Սիրոյ Արարչին Ծննդեան՝ Աստուծոյ տաճարէն, Աստուծոյ պաշտօնէին բերնով՝ որ բազկատարած գթութիւն, սէր, խաղաղութիւն պիտի հայցէր Երկինքէն իր տառապակոծ հայ հօտին համար, ահա լոյսի տեղ խաւար, հրեշտակներու տեղ անողորմ ու դիւաբախ ոգիներ, կեանքի տեղ մահ և արիւն. և ահաւոր եղեռնը կու տայ մեր հայ եղբայրներուն մէջ խռովքի, ցաւի և կսկիծի դժոխալուր արձագանգը։

Որպիսի տօն, որպիսի պատկեր… Թշուառ ժողովուրդ։

Ահա մեր ցաւն ալ, մեր կսկիծն ալ խառնուած հասարակաց մեծ սուգին, և մենք յանուն ամբողջ մեր նահատակ եղբայրներուն՝ որոնց արեան հետ կը խառնուի եղերաբախտ Ղեւոնդ Արքեպիսկոպոս Դուրեանինն ալ՝ կը հայցենք Երկնքի գութը, Երկնքի օրհնութիւնը ամենուն համար, ամենուն համար խաղաղութիւն, ամենուն համար սէր և միութիւն։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ




digitised by A.R.A.R.@